

ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆՈՒՄ

Ազատությունը, իր ամենալայն հասկացողությամբ, ենթադրում է ամեն տեսակի բռնադատության բացակայություն: Դրա համար ամենօրյա խոսակցության մեջ ազատ է կոչվում անտառի ծառերի և դաշտի ծաղիկների աճումը, գետերի հոսքը իրենց հունի մեջ, վայրի կենդանիների և չվող թռչունների կյանքը: Ազատ է կոչվում նույնպես հանկարծակի խոսակցությունը, ինչպես նաև ուրիշների կարծիքն արհամարհող մարդկանց կյանքը: Այսպիսի մի ազատություն, սակայն, մաս չի կազմում բարոյական արժեքներին, այլ մնում է բնական, ոչ հատկանշական երևույթ:

Իր բուն իմաստով, սակայն, ազատությունը չի նշանակում միայն որևէ բռնադատության բացակայությունը: Այն արտահայտությունն է հոգի և մարմին կրող մարդու բնածին կարողության, որ օժտված է բանականությամբ և սեփական կամքով անկաշկանդ կերպով ու գիտակցաբար ընտրություն կատարելու տարբեր հնարավորությունների միջև ու նաև գործելու: Այս իմաստով ազատությունը կայանում է՝ բարի ուղղությամբ գործելու կամ չգործելու ուժի մեջ, առանց որևէ բռնադատության կամ ստիպման: Հենց իր այս դրական բովանդակության պատճառով, ազատությունը բարոյական մի արժեք է, հոգեկան մի բարիք, մարդու՝ մյուս արարածների հան-

դեպ ունեցած գերազանցության արդյունք, մարդկային էակի նպատակի իրագործման և արժանապատվության զգացումի արտահայտման հիմնական պայման: Դրա համար ազատությունը կազմում է բոլոր մարդկանց և բոլոր ժողովուրդների գերագույն և հավիտենական ձգտումներից մեկը՝ ներկայացնելով առաջադիմության գլխավոր պայմանը:

Քրիստոնեական վարդապետության մեջ գնահատելու, ընտրելու, մեկ կամ ուրիշ գործողության համար կողմնորոշվելու և ապա գիտակից ու կամավոր կերպով գործելու կարողությունը դիտված է որպես մարդկային էակի հիմնական մի առանձնահատկություն՝ միայն նրան հատուկ: Աստվածահայտության հիման վրա քրիստոնեությունը հաստատում է, որ այս կարողությունը մաս է կազմում սոցիալական այն հատկությունների, որոնք դեռևս ըստ եղծման պահից տրվել են մարդուն Աստուծո կողմից: Քրիստոնեությունը հաստատում է նույնպես, որ բոլոր մարդիկ ունեն միևնույն ծագումն ու բնությունը՝ կենսաբանորեն սերվելով միևնույն նախահորից՝ Ադամից: Հաստատվում է նաև, որ բոլոր մարդիկ ունեն միևնույն արժանապատվությունն ու նպատակը, որովհետև աստվածային շնորհի պատճառով Նրկնավոր Հոր ռդիկներն են և բոլորն էլ հավասարապես կոչված են Հիսուս Քրիստոսի Ավետարանի միջոցով դեպի փրկություն, կատարելություն և երանություն: Եվ որովհետև բոլոր մարդիկ օժտված են բանականությամբ, զգայունությամբ ու սեփական կամքով, ծննդից ի վեր բոլորն էլ գտնվում են կյանքի նույն պահանջների դիմաց և ունեն նմանվող տենչանքներ անհատական բարոյության և երջանկության համար: Այս պատճառով ազատությունը՝ անձնական

* «Էջմիածին» ամսագրի ընթերցողների ուշադրությանն ենք ներկայացնում թարգմանաբար՝ Բուխարեստի Ռումին պատրիարքության «Օրոշողք-սիա» ամսագրի 1975 թվականի հուլիս-սեպտեմբեր համարներում լույս տեսած տ. Նիկողայե Ռդդուկե-կու քաճաճայի վերոհիշյալ հոդվածը:

¹ E. Lenoble, art. Libre arbitre, in „Dictionnaire pratique des connaissances religieuses“, vol IV, Paris, 1926, col 380,

առանձնահատկությունների զարգացման և երջանկության հասնելու անհրաժեշտ պայմանը, պետք է լինի յուրաքանչյուր մարդու հիմնական իրավունքը: Իսկ այն, ինչ որ յուրաքանչյուրի համար հիմնական մի իրավունք է, հոգեկան և նյութական զարգացման մի պայման, պետք է դիտվի նաև որպես յուրաքանչյուր ժողովրդի անձեռնմխելի մի իրավունք, մի սուրբ բարիք և կյանքի անհրաժեշտ, կարևորագույն մի առարկա²:

ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐՆ ՈՒ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐՆ ԱՍՏՎԱԾԱԸՆԶՈՒՄ

Հին Կտակարանի գրքերում ազատությունը դիտված է առաջին հերթին որպես ստրուկների, բանտարկյալների, գերիների, ճնշված զանգվածների, կամ էլ, ընդհանուր առմամբ, ուրիշների իշխանության տակ գտնվող մարդկանց հատվածներին մաս չկազմող անձերի հասարակական դրություն³: Հին ժամանակների հրեաները ազատությունը համարում էին որպես Աստուծո կողմից ուղարկված մի պարզև Նրա ժողովրդին, ժողովուրդ, որին Աստված հրաշալի կերպով փրկել է եգիպտական գերությունից և որի ապագայի համար Նա հոգ էր անում հայրաբար: Ստրկությունն ու պարտադիր ծառայությունը համարվում էին աստվածային պատիժ անհնազանդության համար: Աստվածը գրքի ԻԵ ԳԼԽԻ 55-րդ համարի համաձայն, իսրայելացին երբեք չպետք է շահագործվի որևէ մարդու կողմից, որովհետև նա պատկանում է բացարձակապես միայն Եհովային: Այնուամենայնիվ պատմական խոչընդոտները պատճառ են հանդիսանում, որպեսզի Աբրահամի հաջորդների մեջ էլ ստրկությունը դառնա

ընկերային վերք: Բայց Մովսիսական օրենքում նշված մարդասիրական գաղափարների պատճառով, ստրուկների հանդեպ հրեաների ունեցած վերաբերմունքը միշտ շատ ավելի մարդկային է եղել, քան հին աշխարհի մյուս ժողովուրդների մոտ, իսկ պարտավորիչ ազատ արձակումները սաքաթական և հոբելյանական տարիներին թույլ չեն տվել, որպեսզի ստրկությունը մնալուն վիճակ լինի որևէ մի իսրայելացու համար:

Հին Կտակարանի լեզվի մեջ «ազատագրող» (փրկող, փրկիչ) կոչման արժանի է միայն Եհովան, որովհետև հրեա ժողովրդի ազատագրումը թշնամիների ձեռքից Նրա՛ն է պատկանում (Դատ. Գ 9): Սաղմունների մեջ Աստված անվանվում է այսպես նաև կրոնական իմաստով, որովհետև նույնպես Նա՛ է, որ հալատացյալին փրկում է փորձություններից (Սաղմոս ԺԷ 3, ԼԹ 18 և այլն)⁴:

Դա չի նշանակում, սակայն, որ Հին Կտակարանի գրքերի հեղինակները անտեսում էին այն իրողությունը, որ ազատությունը, ինչպես և ստրկությունը գործնականում կախված են մարդկանց կամքից և զործունեությունից, ինչպես մարդկային ամեն արարք կամ ընկերային որևէ վիճակ: Մարգարեները դատապարտում են անողորմ խոսքերով բոլոր նրանց, ովքեր ուրիշներին ծառայեցնում են, կամ ստրուկների հանդեպ անմարդկային վերաբերմունք էին ցուցաբերում և կամ արգելքներ ստեղծում նրանց ազատագրման համար: Ապագա ժամանակների մասին ունեցած իրենց տեսիլքներում մարգարեները նկարագրում են խոտաճված Մեսիային, ինչպես երկնային մի առաքյալի, որը ազատելու է մարդկանց ամեն տեսակ ծառայություններից և զրկանքներից: Մեսիական իդեալը ուներ, ուրեմն, թե՛ կրոնական, հոգևոր բնույթ՝ հալատացյալների ազատագրումը մեղքի գերությունից, սատանայի բռնությունից և մահվան իշխանությունից, և թե՛ ընկերային, հասարակական բնույթ՝ վերացումը մարդկանց միջից անարդարության, ճնշման և բռնության, և հաստատումը ամբողջ երկրագնդի վրա՝ ազատության, հավասարության, խաղաղության, եղբայրու-

² I. P. S. Nicolae Mladin, mitropolitul Ardealului, Studii de teologie morala, Sibiu, 1959, p. 18

³ Հին Կտակարանում ազատությունը բառի հասկացությունը արտահայտվում է եբրայական լեզվի *hufsa* բառով, որին համապատասխանում են *ἐλευθερία* (Յոթանասնից թարգմանության մեջ) և *libertas* (Վուլգատայի մեջ): Ազատել (ազատագրել) գաղափարի համար օգտագործվում են *gaal* (փրկագնել) և *padah* (ազատագրել, ազատել) բառերը, որոնք թարգմանվում են *לֹשַׁטְרָם* և *הִשְׁלֹשְׁתָּ* Յոթանասնիցի մեջ և «redimere» Վուլգատայի մեջ: Նույն իմաստն արտահայտելու համար օգտագործվում է նաև «deror» բառը (*דֶּרֶר*: Յոթանասնիցի մեջ), *libertas*, *indulgentia* կամ *remissio* (Վուլգատայի մեջ): Ազատ մարդը կոչվում է «hofs» (Յով. Գ 19, Բ Օր. ԺԵ 12), բառ, որի թարգմանությունը Յոթանասնիցի մեջ է *ἐλευθερός* ածականը, իսկ Վուլգատայի մեջ՝ «liber»:

⁴ Հին Կտակարանի բառապաշարի մեջ փրկել բառը նշանակում է՝ ազատել, փրկել (Միքիա Գ 10), պաշտպանել (Երեմ. Ծ 34), անհատական կամ ընդհանուր տառապանքներից զերծ պահել կամ ազատել (Ա Թագ. Ա 29, Երեմ. ԺԵ 21), ինչպես նաև մեղքերին թողություն տալ (Սաղմ. ԺԻԹ 8) ու օրհնություններով լցնել (Եսայի ԾԱ 11):

թյան և սիրո հավիտենական մի դարաշրջանի:

Նոր Կտակարանում ազատության ըմբռնումը, որպես մարդկային անձնավորության չափանիշ և որպես ընկերային բարիք, դիտվում է որպես ստրկությանը (δουλεία) հակասող գաղափար և արտականոն, «ἐλευθερία»⁵ գոյականով, «ἐλευθερία»⁶ բայով և «ἐλευθερία»⁷ ածականով (ազատագրված, ազատություն, ազատ): Այս բառերը արտահայտում են ազատության գաղափար, դիտելով այն՝ մարդկանց միջև եղած ընդհանուր հարաբերությունների տեսանկյունից ընկերային կյանքում (Հովհ. Ը 33, Ա Կորնթ. Է 21, Գաղ. Գ 28, Եփես. Զ 8, Հայտ. Զ 15 և այլն), և քրիստոնյաների միջև եղած անհատական հարաբերությունների տեսանկյունից՝ եկեղեցական համայնքների կյանքում (Ա Կորնթ. Թ 19, Գաղ. Բ 4): Ազատություն կամ ազատագրում կոչվում է մաս քրիստոնյաների անկախությունը Մովսիսական օրենքի արարողական կանոններից, որոնք ծառայության մի լուծ էին կազմում հրեաների համար (Գաղ. Բ 4), ինչպես նաև քրիստոնյաներին շնորհված հարկազերծումը մեղքի (Հռովմ. Զ 18, Ա Պետր. Բ 16) և մահվան ուժից (Հռովմ. Ը 2): Այս բառերը օգտագործվում են նույնպես ներկայացնելու համար փրկվածների վիճակը անդրաշխարհում՝ այս աշխարհի և Աստուծո հարաբերությամբ (Մատթ. Ա 17, Հովհ. Է 32, Հռովմ. Ը 21, Գաղ. Դ 26):

Ազատության այս իդեալին ծառայելը իր ծագումից ի վեր բնորոշ է եղել քրիստոնեությունը: Մեսիային ընդունելու պայմանների շարքում՝ ս. Հովհաննես Մկրտիչը, հիշեցնելով Եսայիի մարգարեությունը (Խ 3—5), կարևորագույն տեղ է հատկացնում մարդկանց միջից անարդարության, ճրճման և բռնության վերացմանը (Ղուկ. Գ 4—6): Զաքարիա քահանան, հենց Նախակարապետի ծննդից առաջ, օրհնում է Աստծուն՝ իր ժողովրդի ազատագրման կամ փրկագնման համար (Ղուկ. Ա 68): Անձնա մարգարեությանն տեսնում է Հիսուս Քրիստոսի մեջ Երուսաղեմի բոլոր բնակիչների ազատության հույսերի իրագործողին (Ղուկ. Բ 38): Իսկ մեր Տերը Հիսուս Քրիստոս սկսելով Իր հրապարակային գործունեությունը՝ պաշտոնապես հայտարարեց, մեջբերելով Եսայիի կանխատեսությունը, որ

աշխարհ եկավ «անետարանել աղքատաց..., բժշկել զբեկեղս սրտի, քարոզել զերեաց զթողություն... արձակել զվիրաորս ի թողություն» (Ղուկ. Դ 18—19):

Ըստ Նոր Կտակարանի մարդու անհնազանդությունը Աստծու նկատմամբ, այսինքն՝ մեղքը, պատճառ է մահվան, ամեն տեսակի ստրկության, ուրեմն և հրեաների Մովսիսական օրենքի հանդեպ ստիպողական ծառայության: Հիսուս Քրիստոսի նկատմամբ հավատքի, աստվածային շնորհի և Ավետարանին հետևելու միջոցով քրիստոնյան մի մոր էակ է, որին հպատակեցնելու ուժ չունեն, այլևս ո՛չ Մովսիսական օրենքի ճնշող, ներող կանոնները (Հռովմ. Զ 1—6, Գաղ. Գ 2), ո՛չ մեղքը (Հռովմ. Զ 1—11, Կող. Ա 13) և ո՛չ մահը (Հռովմ. Ե 21, Ա Կորնթ. ԺԵ 56): Ոչնչացնելով մահու խաչքոցը, այսինքն մեղքի գործությունը (Ա Կորնթ. ԺԵ 56), Հիսուս Քրիստոս բացեց մարդկանց համար դեպի քարոյական և կրոնական ազատություն տանող ճանապարհը, դարձնելով որդեգրյալներ, Հայր Աստուծո սիրույն մեջ՝ դարձնելով նրանց հավիտենական կյանքի և երանության մասնակիցներ (Գաղ. Դ 4—7): Սուրբ Հոգու միջոցով շահված այս ազատությունն ու աստվածային որդեգրումը կարող են կորսվել մկրտությունից հետո, եթե քրիստոնյան չի համագործակցում աստվածային շնորհի հետ իր փրկության համար, այլ վերադառնում է իր արարքներով դեպի մեղքի ծառայություն (Հռովմ. Զ 10—16, Գաղ. Ե 1—4, Հայտ. ԻԲ 14): Այս ազատությունը ու այս որդեգրությունը լիապես կատարյալ կլինեն միայն հանդերձյալ կյանքում, մանավանդ վերջին դատաստանից հետո, երբ «Քրիստոս նորոգեցե՛զ զմարմին խոնարհությամբ մերոյ՝ կերպարանակից լինել մարմնոյ փառաց իւրոց» (Փիլ. Գ 21): Դեռևս այժմվանից սակայն քրիստոնյաներն Աստուծո սիրելի որդիներն են (Հռովմ. Ա 7, Եփես. Բ 18) և ի վիճակի են կատարելու իրենց հոգու մղումով Երկնային Հոր կամքը (Մատթ. Ե 10):

Մովսիսական օրենքի արարողական կանոններից քրիստոնյաների ազատումը անհրաժեշտ դարձավ միսիոներական առումով, մովսիսականների հետ ունեցած հակասությունների շրջանում: Ա. Պողոս առաքյալն է, որ շաքարոք պահելու փարիսեցիների ուսմունքի և հրեաների ուրիշ սովորությունների հանդեպ Քրիստոսի ունեցած վերաբերմունքի հիման վրա հարկ եղած եզրակացությունների հանգեց և բացահայտեց Մովսիսական օրենքին ծառայարար հատկելու և ազատության Ավետարանի միջև եղած հակասությանը (Բ Կոր-

⁵ Հռովմ. Ը 21, Ա Կորնթ. Ժ 29, Գաղ. Բ 4, Հալոթ. Ա 25, Ա Պետ. Բ 16 և այլն:

⁶ Հովհ. Ը 22, Հռովմ. Զ 18, Գաղ. Ե 1:

⁷ Մատթ. ԺԷ 26, Հովհ. Ը 33, Հռովմ. Զ 22, Գաղ. Գ 28, Եփես. Զ 8, Կող. Գ 11 ևն:

րընթ. Գ 3—17, Հոռմ. Ը 21, Գաղ. Բ 4): Ազատ լինելով հանդերձ հին օրենքից քրիստոնյան, սակայն, ազատ չէր մեղանշելու (Գաղ. Ե 13), որովհետև նա, որ մեղանշում է, մեղքի ծառա է դառնում (Հովհ. Ը 34), մինչդեռ հավիտենական ճշմարտության ճանաչելը, աստվածային շնորհի ընդունելն ու Քրիստոսին հետևելը՝ հավատքի և բարի արարքների միջոցով, ազատում են մարդուն մեղքի լծից, վերադարձնում են նրան ազատությունն ու զորությունը Երկնավոր Հոր կամքը հոգու մղումով կատարելու համար. դարձնում են մարդուն Աստուծո սիրելի որդին (Հովհ. Ը 32):

ԱՍՏՈՒԾՈՒ ՊԱՏԿԵՐԸ ՄԱՐԴՈՒ ՄԵԶ՝
ՄԱՐԴԱՅԻՆ ԷԱԿԻ
ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ
ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Քրիստոնեական վարդապետության համաձայն մարդը Աստուծո մտածմունքի, կամքի, բարության և ծրագրի հատուկ արդյունքն է: Ծննդոց գրքում ստուգորեն նշվում է, որ մարդը չի ստեղծվել մյուս առարկաների և կենդանիների նման, այլ առանձնահատուկ մի կերպով, «ըստ պատկերի... և ըստ մտածմունքի» Աստուծո (Ծննդ. Ա 26): Այս արտահայտությունը, խիստ տառացիորեն փոխադրված Աստվածաշնչի հին թարգմանություններում, հասկացվել է տարբեր ձևերով մեկնիչների կողմից: Եկեղեցու սուրբ հայրերից և գրողներից ոմանք մարդու մեջ եղած Աստուծո «Պատկերը» ու «Նմանությունը» կապում են նրա՝ ողջ նյութական ստեղծագործության վրա իշխելու և այն իր կարիքներին և նպատակներին ենթարկելու կոչման և կարողության հետ⁸: Նրանցից, սակայն, ամենաշատերը մտածեցին, որ ակնարկվում է մարդու հոգեկան բնությունը և հոգու հատկանիշները, որոնք են՝ անմահությունը, ուշիմությունը և ազատությունը⁹:

Այս հատկությունները դրսևորվում են ուրույն մտածմունքի, բարոյական զգայունության և ազատ կամքի միջոցով, այսինքն՝

մարդուն առանձնահատուկ այն կարողության, որը կայանում է՝ ինքն իրեն դատելու, առարկաների և արարքների մասին գնահատական դատողություններ անելու, չարն ու բարին տարբերելու, Աստուծո ճանաչելու, ամեն տեսակ գործողություն կատարելու կամ չկատարելու և բարոյական կատարելության ու հավիտենական երանության հասնելու համար աստվածային շնորհին համագործակցելու ընդունակության մեջ: Այս բոլորը հիմնովին տարբերում են մարդուն մյուս արարածներից, դարձնում բազմաթեք առանձին մի էակ՝ օժտելով նրան անհավասարելի արժանապատվությամբ (Մատթ. Ժ 26, Եբր. Բ 6)¹⁰:

Մտածմունքի և կամքի խոր ոլորտում ինքն իրեն ազատ զգալու և գործելու կարողությունը համարվում է մարդկային էակի առաջնային առանձնահատկություններից մեկը: Հոգեկան այս կարողությունը, որից զուրկ են մյուս բոլոր կենդանիները (նրանք անդիմադրելիորեն հետևում են կենսաբանական քննադրների մղումներին), հին աշխարհի հույն փիլիսոփաների կողմից կոչվել է ազատ իրավարար (libre arbitre): Ազատ իրավարար-ի շնորհիվ մարդը գիտակցում է, որ ինքն է իր արարքների ծրագրողն ու իրագործողը: Նույնպես այս կարողության շնորհիվ է, որ մարդ իր արարքների համար ենթակա է թե՛ վարձատրության և թե՛ մեղադրման ու պատժի, պատասխանատու է իր բարոյական գիտակցության առաջ (Հոռմ. Բ 15), մյուս մարդկանց և մանավանդ Աստուծո առաջ (Հոռմ. Բ 6)¹¹: Ապացույցը, որ մարդ ղեկս իր ծագումից սկսած օժտված է այս կարողությամբ, այն է, որ Աստված պայմանավորեց նրա եղնական երջանկությունը հատուկ մի պատվիրանի կամովին կատարմամբ, իսկ անհնազանդության մեղքի համար զրկեց նրան իր շնորհից՝ թողնելով նրան տանջանքի և մահվան ենթակա (Ծննդ. Բ 16, Հոռմ. Ա 21):

Ա. Գիրքը չի բնորոշում կոնկրետ «ազատ իրավարարի» վիճակը և չի վերլուծում նրա գործելակերպը: Աստվածաշնչում բնդգրծվում է, սակայն, շատ անգամ ազատ իրավարարի գոյությունն ու դերը, ինչ որ օգնում է մեզ տարբերություն դնել նրա և բուն

⁸ St. Grigore de Nissa, Despre facerea lumii Teodoret de air, comentariu la I cor. XI, 7 sj Sf. Ioan Cura de Aur Omiliiile: VIII, IV, VIV la cartea Facerii.

⁹ Fericitul Augustin, De Trinitate, XII, 2, P-L—42, 1038: Sf. Macarie cel Mare Omilia XXV, 23, P-G XXXIV, 591: Sf. Ioan Damaschin, Despre Credinta ortodoxa XI, 2, P-G, XCIV, 920.

¹⁰ Medebielle, Epitre aux Hébreux, in „La Sainte Bible commentée“ ed. de L. Pirot vol. XII, Paris, 1938 p. 299.

¹¹ Iubliu Scriban, curs de Teologie morala, Bucuresti, A. Boulenger, Manuele dapol ogetique Lyon. Paris, 1934. p. 106.

բարոյական գիտակցության միջև: Այսպես, մինչ բարոյական գիտակցությունը ի հայտ է գալիս, որպես դատավոր արարքները գործելուց հետո, ազատ իրավարարը հայտնվում է արարքները կատարելուց առաջ, որպես ընտրող ուժ (Բ Օրին. ԺԱ 26, Սաղմ. ԺԹ 2, Դուկ. ԺԳ 35): Աստվածաշնչի համաձայն ազատ իրավարարի դերը մարդկային կյանքում պատճառ հանդիսացավ, որպեսզի նրա գոյության և կարևորության մասին եղած ուսմունքը կենտրոնական տեղ գրավի մովսիսականության նախաքրիստոնեական դավանանքում¹² և

որպեսզի դառնա քրիստոնեական մարդկերպության և փրկչագործության դավանաբանական կարևորագույն սկզբունքներից մեկը¹³:

(Ծառունակելի)

¹² I. Bonsirven, Le judaïsme contemporain, vol II, Paris, 1935 P. 10.

¹³ P. Benoit, La liberté religieuse a la lumière de la Revelation, in col. "Unam Sanctam", vol. 60, Paris, 1967, P. 205.

B. Spick, Theologie morale de Nouveau Testament, vol. II, Paris, 1965, p. 773.

Ռուսիներենից թարգմանեց՝
ՍՈՐԻՆ ՍՐԿ. ՄԱՆԴԱԼՅԱՆ

